ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 55

24 ապրիլի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, հաշվի առնելով Պարետի՝ 2020 թվականի մարտի 20-ի №Ց/17-2020 ցուցումը և 2020 թվականի մարտի 31-ի №27 որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 22-ի N 1111-Ա, №1108-Ա, 2020 թվականի ապրիլի 23-ի №1138-Ա, №1139-Ա և №1141-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի ապրիլի 22-ին և 23-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
   1) Արմեն ՕՍՍ» ՍՊԸ, ք. Երևան, Մարգարյան 22/4.
   2) Էլմիրա Միրզոյան» Ա/Ձ, ք. Երևան, Մարգարյան 12/1.
   3) «Մարինե Բաղդասարյան» Ա/Ձ, ք. Երևան, Մարգարյան 16/1.
   4) «Աիդա Հովհաննիսյան» Ա/Ձ, ք. Երևան, Աջափնյակ թաղամաս, Շինարարների 29/1
   5) «Նորայր Գրիգորյան» Ա/Ձ, ք. Երևան, Թոթովենց 14/1:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Արման Սարգսյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 24/04/20 17:34:00 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ